ՎԱՐԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վարկատեսակի անվանումը	<<ԲԻԶՆԵՍ-ՍՏԱՆԴԱՐՏ>> (գույքի գրավով և ֆինանսական հոսքերով ապահովված)
Վարկի նպատակը	ձեռնարկատիրական
Պայմանները սահմանող մարմինը, որոշումը	<<ԲԼԵՍՍ>> ՈՒՎԿ ՍՊԸ Խորհրդի <<11>><<դեկտեմբերի>>2023թ-ի թիվ 17 որոշում
Պայմանների գործողության ժամկետը	Սկսած <<18>><<դեկտեմբերի>>2023թ-ից
Վարկի ձևակերպման վայրը	<<ԲԼԵՍՍ>> ՈՒՎԿ ՍՊԸ գլխամասային գրասենյակ, մասնաճյուղեր
Վարկի արժույթը	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար
Վարկի տրամադրման եղանակը	Անկանխիկ
Վարկի տրամադրման ձևը	միանվագ, փուլային, վերականգնվող կամ չվերականգնվող վարկային գիծ
Վարկի նվազագույն գումարը	5.000.000 ՀՀ դրամ (համարժեք ԱՄՆ դոլար)
Վարկի առավելագույն գումարը	50.000.000 ՀՀ դրամ (համարժեք ԱՄՆ դոլար)
Վարկի առավելագույն ժամկետները	10 տարի - 12.000.000 ՀՀ դրամ գումարը գերազանցող վարկերի համար 8 տարի - մինչև 12.000.000 ՀՀ դրամ գումարով վարկերի համար

Վարկի տարեկան տոկոսադրույքը, ծառայության միանվագ վճարը

Վարկի գումար /ՀՀ դրամ կամ դրան համարժեք ԱՄՆ դոլար/	Տարեկան անվանական նվազագույն տոկոսադրույք		Վարկի տրամադրման ծառայության մեկանգամյա վճար /% տրվող վարկի գումարից/	
	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով
12.000.001 - 50.000.000	14,9	10,7	0,7	0,4
5.000.000 - 12.000.000	15,9	11,2	0,7	0,4

Վարկի և տոկոսագումարների վճարման եղանակը	Վարկի մարման եղանակ – ամենամսյա (հավասարաչափ կամ ոչ հավասարաչափ) Տոկոսագումարների վճարման եղանակ – ամենամսյա Վարկային գծի մարման եղանակ - ժամկետի վերջում՝ միանվագ
Վարկի մարման դադարի շրջանը	կարող է սահմանվել վարկի մայր գումարի դադարի շրջան, ոչ ավել, քան տրամադրվող վարկի ընդհանուր ժամկետի 1/3-ը
Տոկոսագումարների հաշվարկման կարգը	Տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով, տարվա օրացուցային օրերի քանակով
Անվանական տոկոսադրույքի փոփոխությունը	Վարկի անվանական տոկոսադրույքը պայմանագրի գործողության ընթացքում մնում է անփոփոխ
Ժամկետանց վարկի տոկոսադրույքը	տարեկան 24%
Ժամկետանց տոկոսագումարի տույժը	օրական 0,13%
Վարկային գծի չօգտագործված մասի նկատմամբ հաշվարկվող տույժ	Չի սահմանվում
Պարտքի գանձման հերթականությունը	Տույժեր, տոկոսագումարներ, վարկի մայր գումար
Վարկի վաղաժամկետ մարումը	Վարկի վաղաժամկետ մարումը թույլատրվում է, տույժեր և տուգանքներ չեն սահմանվում:

ՎԱՐԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Վարկի ապահովման միջոցները	Գրավ՝ անշարժ և շարժական գույք, որն Ընկերության համար ունի բավարար լիկվիդայնության /իրացվելիության/ աստիճան:
Վարկի գումար/գրավի գրավադրման արժեք	Անշարժ գույքի դեպքում - 70%

առավելագույն հարաբերակցությունը	Շարժական գույքի դեպքում - 55% Շրջանառության մեջ գտնվող ապրանքների դեպքում - 30% Շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավի տեսակարար կշիռը գրավի կազմում չի կարող գերազանցել ընդամենը գրավի առարկաների գրավադրման արժեքի 20%-ը:
Գրավադրման հետ կապված ծախսերը	Գրավ դրվող անշարժ գույքը ենթակա է գնահատման, իսկ անշարժ գույքի գրավի պայմանագիրը՝ նոտարական վավերացման և պետական գրանցման: Շարժական գույքը ենթակա է միայն պետական գրանցման: Գրավադրման հետ կապված անհրաժեշտ բոլոր ծախսերը՝ գույքի գնահատման, նոտարական վավերացման և պետական գրանցման, կատարվում են հաճախորդի կողմից:

ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հաճախորդի տարիքային սահմանափակումները	Ա/Ձ հանդիսացող Վարկառուի նվազագույն տարիք - 22 տարեկան Ա/Ձ հանդիսացող Վարկառուի առավելագույն տարիք /վարկի մարման վերջնաժամկետի դրությամբ/ - 68 տարեկան Գրավատուի առավելագույն տարիք /վարկի մարման վերջնաժամկետի դրությամբ/ - 68 տարեկան
Երաշխավորի պահանջը	Վարկային հայտի առանձնահատկություններից ելնելով, որոշ դեպքերում կարող են պահանջվել երաշխավորներ
Ապահովագրության պահանջը	Վարկային հայտի առանձնահատկություններից ելնելով, Ընկերությունը որոշ դեպքերում կարող է պահանջել ապահովագրել գրավ դրվող շարժական գույքը՝ ոչ պակաս, քան տրվող վարկի գումարի չափով: